

891.71  
U-56

U-56

U-56

39 NOV 2010

ՀՐԱՄԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՎԵՐԴԱՆ ԱՅՎՈԶԵԱՆԻ

1912007 JUL 18

## ԱՅ ԱՅՎԱԶՅԵՍԻ

04 OCT 2010

U. S.

117211 = 2

# ԱԽՐԱԳՈՅՆԸՆԻԹԻՒՆ

Urku kylkula qrnjg



## ԱԱՎԱՐՁԱԿՆ

ՏՊԱՎԻՄԱԳՐՈՑՈՒՆ Բ. ԴԱԶԱՐԵԱՆ ԵՒ Կ. ԱԼԻՔԵԱՆ

1 9 1 1

31 JUL 2013

ԱՐՏՎՈՒԹՅՈՒՆ

13522

ԱՐՏՎՈՒԹՅՈՒՆ

Ա.

Հին ժամանակները՝ Ասիայի հարուստ Մուսուլ քաղաքում՝ ազգում էր ամենքից յարգուած Մահմեդ Ալի անունով մի ծերունի։ Զատերը նրան ճանաշում ու մեծաբում էին իր անհամար հարստութեան ու բոլոր երկիրների հետ ունեցած ընդարձակ առևտորի պատճառով։ Ուրիշները նրան զովարանում էին իր հիւրասիրութեան ու աղուհացի համար։ Նրա ճոխ ապարանքը բաց էր ամեն մի պանդուխտ մարգու առաջ, ով էլ որ լինէր։ Այսուեղ միատեսակ սիրով էին ընդունում մտնող հիւրին, հարուստ լինէր՝ թէ աղքատ, օտարական՝ թէ հայրենակից։ Նրան տանում էին փարթամօրէն կահաւորուած սենեակները և ամեն կերպ ծառայում էին նրան։ Սմեն ինչ նրա տրամադրութեան տակ էր, և բաղնիք, և ուսելիք, և օթեան։ Ումանը էլ Մահմեդ Ալուն սիրում էին նրա լուսամիտ բանականութեան և անվեղծ բնաւորութեան համար։ Երկրի ամիրավետը ծանր ու շփոթ ժամանակներում նրան հրաւիրում էր խորհրդակցութեան, և իմաստուն ծերունին միշտ խաղաղատէր ու մտացի խորհուրդներ էր տալիս։ Մուսուլի բնակիչները այնպէս էին յարգում նրա խօսքը, որ գժուարին պարագաներում նրան էին զի-



4857-2010

թեան հպարտ գիտակցութիւնը, իսկ աչքերը վառում էին, կարծես իրանց առաջ տեսնելով մի ինչ որ բարձր, զրաւիչ բան:

—Այդ հեշտ չէ, որդեակ, —հանգարտ պատասխանում էր հայրը, չոյելով նրա գանգրահեր զլուխը: —Դժուար է հասկանալ ու գտնել իսկական միծութիւնը:

—Ես ուզում եմ բարի լինել, —ասում էր դեռ մանուկ ժամանակ նուրէզդինը, մտախոհ նայելով զէպի փողոց:

Այնտեղ, ամառուայ կիզիչ օրերին, փառու և իրեղուկ օդի մէջ զնում էին ստրուկները բաց զլուով, բեռնաւորուած էշերի և ուզաերի մօտով ծանր քայլելով. անցնում էին ծառաները, փութալով իրանց տէրերի յահճնարարութիւնները կատարելու. վաղ էին տալիս չարսաներով ծածկուած աղբատ ընտանիքների կանայք իրանց անային հոգսերով. իսկ աւելի հեռուն մի որ և է՝ մուրացիկ տղայ, ամբողջովին պատառուած շորերով ու կեղտոտ, մի հով անկիւն էր որոնում այրող արևից պահպանուելու համար: Եւ նուրէզդինը, փողոց նայելով, ակամայ մտածում էր՝ թէ ինչպէս իրա համար լաւ ու գով է իր հօր քարաշն ապարանում, սրտեղ ամեն ինչ այնքան առատ է, իսկ այնտեղ, փողոցում, մարդիկ առանց հանգստի իրանց ապրուստի հոգսովն են տարուած, և շատերն էլ, ինչպէս ալդ

ցնցոտիներով տղան, չը գիտեն՝ ուր թագնուեն շոգից ու ծարաւից: Եւ արցունքով լցուած նուրէզդինի աչքերը դառնում էին զէպի հայրը: Հայրը հասկանում էր նրան, քնքշաբար շոյում նրա գլուխը և ծառային ուզարկում էր մուրացիկ տղայի յիտեից: Ծառան հրաւիրում էր նրան հանգստանալ նուրէզդինի հօր հիւրամեծար յարկի տակ: Մուրացկանին տալիս էին կերակուր ու հագուստ, քաջալերում փաղաքշական խոռըերով, և նա զուրս էր գալիս այնտեղից ուրախ, առոյզ, օքնելով Երկինքը:

Աւելի ուշ, երբ նուրէզդինը չափահաս էր զարձել և կարող էր իրա համար սրտի ուզած պարապմունքը զանել, յաճախ առաւօտ կանուխ նա ուր որ զնում էր, առանց տնեցիներից մէկն ու մէկին մի բան ասելու:

Այդ մասին գիտէին մուրացկանները, անտաներն ու հիւրանդները: Նա նրանց օգնում էր ինչպէս և ինչով որ կարողանում էր: Նրա հօր առատաձեռնութիւնը նրան թողլ էր տալիս զուրս բերելու աղբատին չքաւորութիւնից. բայց ամենից աւելի սիրում էր նա իննամք տանել ախտաւորներին, ծերունիներին ու մենաւորներին, ծառայելով նրանց և օգնելով քժշկական ճարերով, չը զարշելով նշ մի անմաքուր հիւրանդութիւնից, չը վախենալով նշ մի վարակումից: Նրա սրտապին կարեկցութիւնն ու բարի խօսքը

միշտ սիօփանը էին վշտացածների համար և  
կալվացնում էին Աստծու և մարդկանց դէմ շա-  
րացածների սրտերը:

Յաճախ տեսնում էին քաղաքի բնակիչ-  
ները՝ թէ ինչպէս նա երեկոյեան տռն էր վերա-  
գառնում իրա մօտ տանելով մի որ և է մուրաց-  
կանի կամ հիւանդի, իսկ նրա չօրս բոլորը և  
նրան զիմաւորելու համար վաղիցում էին երե-  
խաները ուրախ ճիշելով: Իրա մօտ առաջնորդե-  
լով հիւրին, նուրէդինը հոգածութեամբ ու  
քնքութեամբ զոհացնում էր զժրախտի բոլոր  
կարիքները, յիտոյ գուրս էր զալիս երեխաների  
մօտ, և մի առանձնացած անկին գտնելով՝ նըս-  
տում էր զետնին երեխաներով շրջապատուած,  
պատմում էր հրաշալի հէքիաթներ, երգում  
նրանց հետ երգեր ու ազօթքներ: Այդ բոլորը  
նա անում էր այնպէս անազմուկ, համեստ ու  
աննլատելի, որ շատ ըիշերն էին իմանում նրա  
այդ արարքների մասին, և նրա եղբայր Զա-  
ֆարը շատ անզամ զարմանում էր՝ թէ նրախի  
ուրախութիւն են առթում այդ զրագումները  
իր կրտսեր եղբօրը:

Այդպէս մեծացան եղբայրները, և շը նա-  
յելով նրանց բարքերի ու ցանկութիւնների ան-  
նմանութեան, նրանք շատ սիրով էին ու մի-  
մանց նուիրուած:

Զաֆարը քսան տարեկան էր արգին: Նա  
երազում էր՝ թէ ինչպիսի վառաւոր ու մեծ  
զարդունկութիւն ըստրէ իրա համար: Նա կըր-  
թուած էր ու շատ չնորհների տէր, օժտուած՝  
զարմանալի ճարպիկաթեամբ և ովտով: Նրա ոլէս  
Ճի հեծնող ու նկտածիկ չը կար ամբազչ Մո-  
սուլում:

— Սիրակաբժութիւն, վանք եմ ուզում,  
— չնիջում էր կրտսեածը նրան օգնեց:

Եւ ահա զիսպուածը նրան օգնեց:  
Նրանց երկրի ամիրապետը հարեան պետու-  
թեան հետ պատերազմ սկսեց: Երկու կողմն  
էլ կուտում էին մոլեզնութեամբ:

Ամիրապետի առնեալսու զօբավարները  
սպանուեցին, և նրա զօբքերը սկսեցին պարտու-  
թիւն կրել: Զաֆարը վճռեց, թէ իրան  
հոչալ ձեռք բերելու ժամանակը հասել է, և  
սկսեց հօրը ինպիսի, որ արձակէ իրան՝ պատե-  
րազմի վնալս:

— Մէծ, հոշակուած մարդ կը վերակառ-  
ուած ես քեզ մօտ, հայրը, — ասաց նրան Զաֆարը,  
Հրաժեշտ տարով:

Ծերունին՝ լուս և տիսուր՝ ճանապարհ  
զրեց սրբուն:

Անդաւ մի տարի, երկրադր, երբարդը...

Պատերազմը վերջացաւ։ Այդ ժամանակամիջոցում երիտասարդ Զաֆարը իր հնարամիտ ու յանդուզն քաջազործութիւններով անուն էր հանել և վերջիվերջոյ նշանակուել էր զօրավար։ Նա կատարելապէս ջախջախել էր թշնամուզօրբերը, նուաճել մի քանի քաղաք և վերցրել բազմաթիւ գերիներ։ Նրա յաղթութիւնների չնորհիւ ամիրապետի իշխանութեան սահմանները լայնացել էին, և գրաւուած քաղաքները նրան ստիպուել էին հարկ վճարելու։

Եւ ահա Մուսուլ քաղաքի համար հասաւ մեծ տօնը. պատրաստուամ էր մի հազուագէպ ու շրեղ հանդէս։ Մեծանուն հռչակաւոր զօրավարը, վերապանալով պատերազմից զօրբերի ու գերիների հետ, պէտք է մեծարանքներով անցնէր իր հայրենի քաղաքով։ Փողովրդի բազմութիւնը հաւաքուել էր քաղաքի գոների մօտ։ Գորգեր ու ծաղիկներ էին փուել ճանապարհին, որով անցնելու էր յաղթական Զաֆարը, քաղաքի փառքը, երկրի պատիւը, ամիրապետի սիրելին։ Ծեր ու երիտասարդ, կին ու երեխայ, ամենըն էլ անհամբերութեամբ ու ցնծութեամբ սպասում էին, լարուած հայեացքներով հեռուն նայելով։ Ահա երեաց դանդաղ առաջացող թափօրը։ Ամենքից տուած, գեղատեսիլ նժոյդի վրայ նստած, գալիս էր Զաֆարը։ Ամբոխը ալեկոծուեցից հազարամ վահացի աշխարհը նրա վրայ

սկեռնեցին իրանց հայեացքները, և հիացման աղաղակներ ողջունում էին նրան և ուղեկցում բոլոր փողոցներում։ Յաղթողի յետեկոց բերում էին գերիներին, շղթայակապ ու զօրքերով չըրցապատուած։

Ծերունի Մահմէդ Ալին որդուն գիմաւորելու համար քաղաքի գոների մօտ չէր գուրս եկել, այլ սպասում էր նրան իր տան չէմքում, կրտսեր որդու ուսմին յանուած։ Նուրէգդինը անհամբեր ուրախութիւն էր արտայայտում, բայց ծերունին հանդիսու էր ու վեհաշուր։

Մօտենալով հայրական տանը՝ Զաֆարը ձին կանգնեցրեց, ցած թռաւ և պայծառացած գէմքով՝ յուղուած մօտեցաւ հօրը։ Լուլթիւն տիրեց չորս կողմ. . .։ Հերոսը մինչև գետին խոնարհուեց հօր առաջ, և երբ ծերունին բարձրացրեց ու զրկեց նրան, Զաֆարը կամաց հարցրեց։

— Ճայիր, մեծ եմ ես։

— Ո՛չ որդեակ, — ցած, հազիւ լսելի ձայնով պատասխանեց ծերունին։

Այդ խօսքերը նշ ոք չը լսեց, բայց ամենին էլ տեսան՝ լժէ ինչպէս մթաղնեց գէմքը, ինչպէս արտասուքներ երեացին այն մարդու աշքերին, որի հայեացը առաջ իրար խառնուած ու անկարգ փախչում էին թշնամիները, ամենքը տեսան՝ լժէ ինչպէս զլուխը բաշ տուած մօտե-

յաւ նա ձիուն ու վրան ցատկելով՝ շաբունակեց ճանապարհը, մոայլ ու մտածեստ։ Նրան այլ ևս չէին ուրախացնեւմ ոչ հիացման տղաղակը ները ամրոխի, ոչ էլ փողոցներում սփռուած ու ամեն կողմից նրա ստքերի առաջ թափուով ծաղիկները։

Չուտով լուր տարածուեց՝ թէ մեծ զօրավարը, պետութեան նեցուլը, ահճետացել է յայտնի չէ ար։

### Ե. Ե.

Մի քանի տարի անց, Արեհերի մի մեծ տէրութեան մէջ յայտնուեց մի երխտասարդ զիտնական, որ չուտով ամեն կողմ հռչակ հանեց։ Ամեն տեղ խօսում էին՝ թէ ինչպէս նա զարմանալի կերպով թագաւորին քժշկել էր ծանր հիւանդութիւնից։ Պատմում էին՝ որ առողջացած թագաւորը նրան առաջարկել էր վարձատրութիւն, ինչ որ կը ցանկանայ։ Երխտասարդ զիտնականը խնդրել էր նշանակել իրա համար աւագու տափաստանի մի մասը, և հնարելով ոռոգելու և պարարտացնելու նոր եղանակ՝ կարծ միջոցում դարձրել էր անտպատը ծաղկաւէտ պարտէզի և ներկայացրել պետութեան՝ նրանից օգտուելու։ Մինչև այդ ժամանակ ամայի ամբողջ զաւառներ կարող էին այժմ բնակելի դառնալ։ Երկիր հարստութիւնը դրանով աւելացաւ, և

ժողովուրդը փառաբանում էր երխտասարդ զիտնական Զաֆարին, համարելով՝ թէ նա բը նույթեան բոլոր զալտնիքները թափանցել է։ Բայց ոչ ոք չը գիտէր՝ թէ նա նըտեղացի է, և ամենին էլ նրան ընդունում էին իրքի երկնքից առարուած։

Մի անգամ, ամառային մի խաղաղ երեկոյ, համեստ հազնուած մի երխտասարդ մտաւ Մուռուլ, և համելով Մահմէդ Ալու ապարանքին՝ մուտքի դուռը թակեց։ Երբ ծառան բաց արեց, նա՝ իր գէմրը վերաբկուով ծածկելով խնդրեց իրան առաջնորդիկ տանտիրոջ մօտ։ Ծառան սկզբում սիրա չը անում նիրս թունելու խորհրդատոր անձանօթին, բայց վերջապէս տեղի տուեց նրա յամառ խնդիրըն և եկուորին տարեց տանտիրոջ ննջարանը։ Մահմէդ Ալին՝ զահանքակի վրայ ընկողմանած՝ սուրճ էր վարելում։ Անձանօթը համեստօրէն կանգնեց զրոների մօտ և սովորական ողջոյնը տուեց տանտիրոջ։ Նրա ձայնը առնելուն պէս՝ ծերունին սարսուաց։

— Զաֆար, զմի ես։

— Ես եմ, — պատասխանեց Զաֆարը։

— Ու ու էիր դու մինչեւ այժմ, — բացականչեց հայրը, նետուելով նրան ընդառաջ։

— Փառք էի վնատրում, և ահա ես զտել եմ այն։ Ասա, զու լոել ես որ ի է բան այն երեելի

բժշկի մասին, որ բուժել է մի թաղաւորի: Լսել  
ես դու այն մեծ զիտնականի մասին, որ աւտ-  
զոտ անհապատը պաղպակը հողի է վերածել:  
Այն ես էի: Այժմ ոչ թէ իրը երկիր աւերող, ոչ  
թէ ոչնչացնող սրով, այլ խաղաղութեան ոստով  
եմ եկել քեզ մօտ: Բոլոր աղքերը, թէ մեր և  
թէ օտար, փառաբանում են իմ անունը: Ասա,  
այժմ դու խոստովաննում ես իմ մեծութիւնը:

Ծերունին տիրութեամբ նայեց նրան ու  
կամաց՝ բայց հաստատուն ձայնով պատասխա-  
նեց.

—Ո՞չ:

—Դարձեալ ոչ, —բացականչեց որդին՝ հօր  
պատասխանով շանթահարուած և ծանր հառա-  
շելով՝ խոնարհ գլուխ տուեց հօրը, դուրս ելաւ և  
նորից հեռացաւ իր ծննդպալյար քաղաքից:

## ՏՎ.

Անցաւ մի քանի տարի էլ: Արևելքի բոլոր  
քաղաքներում հիացմունքով էին կարդում մի  
նոր անուանի բանաստեղծի ոտանաւորները:  
Նախկին բանաստեղծների փառքը նսեմացել էլ  
նրա առաջ, ինչպէս աստղերը հրափայլ արեի  
առաջ: Ամեն տեղ կարդում էին նրա բանա-  
տեղծութիւնները. թէ ծեր, թէ երիտառարդ  
երկինք էին բարձրացնում Զաֆարի անունը:  
Նրա հոչակը եկաւ հասաւ և իր հայրենի

քաղաքը:

Մուսուլի ամիրապետը՝ լսելով այդ մասին՝  
հրամայեց գանեել նրան և հրաւիրել արքունի  
բանաստեղծ լինելու: Բայց Զաֆարը անյայ-  
տութեան մէջ թագնուեց, և ոչ ոք նրա մասին  
ոչինչ չխմացաւ, բայցի անունից:

Մի անգամ, առաւօտ կանուխ, Մահմէդ  
Ալու աղարանքին մօտեցաւ փոշոտուած, յոդ-  
նած մի մարդ, ցուլը ձեռքին: Չը նայելով նրա  
աղքատիկ հագուստին ու թալիացած դէմքին,  
ծառաները ճանաչեցին Զաֆարին: Յնծու-  
թեան աղաղակները տարածուեցին ամրող  
տունը, և նրան առաջնորդեցին ներքին սենեակ-  
ները: Այդտեղ Զաֆարը գտաւ իր հօրը, որ  
առաւօտեան աղօթքն էր անում: Տարիները  
կորացրել էին ծերունուն, խորշումները ծածկել  
էին նրա գէմքը, բայց խելքով ու բարութեամբ  
զեղուն միկնոյն յստակ նայուածքով, նայն առա-  
ջուայ սիրով գարձաւ նա որդուն, աղօթքը  
վերջացնելուց յետոյ: Ծերունին նրան գրկել  
ուզեց, բայց որդին՝ նրա առաջ ծնկի գալով  
յուզուած ձայնով հարցրեց.

—Նորից ահա եկայ քեզ մօտ, հայր, ք  
դատավճիռը լսելու ցանկութեամբ վառուած:  
Եմ ոտանաւորները հոգեկան սփափանք ու վայելր  
են տալիս ամենքին, թէ հարուսաններին, թէ  
աղքատներին: Անունս էլ յափական հոչակուած

է. իմ զրածները չեն մեռնելու և իմ մահից յետոյ էլ կարդացուելու են այնպէս, ինչպէս այժմ։ Ասու, խոսափանում ես դու իմ մեծութիւնը։ Ծերունին բարձրացրեց նրան գետնից, և ամուր զրկելով՝ կամաց շշնչաց։

— Ափսոսում եմ քիզ, նրդիս, բայց դու դեռ չես գտել՝ թէ ինչնումն է խոկալան մեծութիւնը։

— Բայց ես կը գտնեմ այն, — բացականչեց Զաֆարը։

— Յետելից ընկնելով՝ դու չես կարող ձեռք բերիլ այն, — նկատեց Հայրը։

Գլուխը քաշ զցած՝ դուրս եկաւ Զաֆարը և նորից ծածկուեց իր հայրենի քաղաքից։

### ▽

Հինգ տարի էր անցել։ Մի համելարտ լուսնեակ զիշեր՝ ծերունի Մահմէդ Նիկն գտրա եկու իր տան կտուրը՝ թարմ օդ չնշելու։ Նա մտորուն նայում էր տատղաղարդ վճիտ երկնքին։ Գլուխը իջեցնելով՝ նա յանկարծ նկատեց ներքեում ապարանքի պատերի մօտ զեգերող մի մարդու ստուերը, որ կարծես չէր համարձակում գուռքթակելու։ Ծերունին սկսեց ուշաղբութեամբ նայել ցնցոտներ հագած այդ մարդուն։ Գատակով նրա բորիկ ստներից ու բաց զլիսից՝ Մահմէդ Ալին վճռեց, որ դա մի անապատական գէրգիշ է։ Նա կացաւ ու սկսեց կանչել։

Համարձակ զարկ գուռը, ով պահպախու։ Ցերեկ թէ զիշեր՝ իմ տունը միշտ բաց է ճամբորդների համար։

Հսկով այդ ձայնը գէրգիշը սարսաց ու հեռու թուաւ պատից, աշքերը վեր բարձրացընելով որ տեսնէ խօսողին։ Լուսինը լուսաւորեց նրա նիհարած գէմը։ Եւ իր թոյլ աշքերով անզամ՝ ծերունին խոկոյն ճանաշեց որդուն, շը նայելով սրա ծերացած ու սոսկալի կերպով մաշուած գէմըին։

— Զաֆար, գտանկու։

— Հայր, — լսուեց ներքեից, և հեկեկանքներն ընդհատում էին Զաֆարի ձայնը։ — Հայր, նայիր, ես հրաժարուել եմ ամեն ինչից, որ կայ աշխարհում։ Հարստութիւն, մեծարանք, վառք, այդ ամենը ունայն է, ես այդ հասկացայ։ Եւ ահա զնացել եմ անապատ և միայն Աստծուն եմ տալիս իմ բոլոր մտածումներն ու կետիրը։ Խիստ սբահեցողութեամբ, անդպարում ազօթքով ու ծանր զրկանքներով ես ծառայում եմ Աստծուն և միայն նրանից եմ սպասում փառի պատել։ Ես հրաժարուեցի աշխարհային պատիներից, հասկանալով թէ նրբան չնշին ու փոքր էի ես իմ զսողութեան մէջ, և ահա այժմ ինձ սուրբ են կոչում, և ամեն կողմից ինձ մօտ են թափում աշակերտներ։ Բայց այդ բոլոր ինձ չէ ուրախացնում և ես միայն քո գա-



տավճախն կը հաւատամ։ Եսա, հայր, ևս քեզ  
հասկացել եմ, հասել եմ ճշմարիտ մեծութեան։

Զաֆարը լսեց, սրտի տրոփիւնով պատաս-  
խանի սպասելով։ Ծերունին լուռ տրտմու-  
թեամբ նայեց նրան և վերջապէս ասաց.

—Ե՞նչ օգուտ քեզ իմ հաւանութիւնը, սր-  
դեակս։ Քո խիզը ինքն է ասում քեզ, որ զու-  
ղեռ չես գտել ճշմարիտ մեծութեան ուղին,  
որովհետեւ քեզանում դեռ այնքան զօրեղ է հը-  
պարտութեան ու ինքնասիրութեան ողին։

Այդ պատասխանը կայծակնահար արեց  
Զաֆարին։ Նա թերուեց պատին ու խուզ կեր-  
պով հեկեկաց։ Ծերունին շտապեց իշնել կտու-  
րից՝ որդուն ներս բերելու, բայց երբ գուրս  
եկաւ փողոց, Զաֆարը անհետացել էր արդէն։

### Վ. I.

Չատ շուտով մի ահոելի թշուառութիւն  
հասաւ այդ երկրին։ Թարձեալ սարսափելի  
պատերազմ սկսուեց հարեան ամիրապետի հետ։  
Սա առիթ էր սրսում յետ վերցնելու իր կոր-  
ցրած քաղաքները, որ խլել էր զօրավար Զա-  
ֆարը առաջին պատերազմին։ Այս անդամ Մու-  
սուլի ամիրապետի զօրքերը չը զիմացան կա-  
տաղի թշնամու զօրութեան։ Նրանք ջախջախուե-  
ցին ու փախան։ Չատ քաղաքներ, որոնց  
թւում և Մուսուլը, առնուեցին ու կործանուե-

ցին։ Առանձնապէս վ'նասուեց Մահմէդ Ալին։  
թշնամիները նրանից վրէժ առան՝ իբրև հայրը  
իրանց այնքան տտելի Զաֆարի։ Իրան Զա-  
ֆարին չը գտնելով Մուսուլում, նրանք կողոպ-  
տեցին ու քանդեցին այն ամենը, ինչ որ ունէր  
Մահմէդ Ալին։ Դարերով հաւաքուած գանձերը  
յափշտակեցին։ Հրդեհի բոցերին կուլ գնացին  
նրա ապարանքները, ծառաների մի մասը կոտոր-  
ուեց, մի մասն էլ գերի տարուեց։ Բայց ծերու-  
նու համար ամենից ծանր էր տեսնել՝ թէ ի նշ-  
պէս շղթայակապ գերի էլին տանում գլխից  
վիրաւորուած իր հեզ նուրէզգինին, իր ծերու-  
թեան ուրախութիւնն ու նեցուկը։ Եւ նշ միայն  
նուրէզգինի հայրն ու ընտանիքն էին ոգրում  
նրան, այլ և բարձրագոշ հեծեանքներով ու  
ողբերով ճանապարհ էր զցում նուրէզգինին  
Մուսուլի բնակիչների ահազին բազմութիւնը,  
առաւելապէս աղջատները։ Իսկ նա զնում էր  
հանգարած ու խոնարհ, զլուխը քաշ արած։ Բայց  
նրա արտասուրով լի աշքերը տրտմութեամբ  
նայում էին հայրենի քաղաքին ու լժանկազին  
մերձաւորներին։

Մահմէդ Ալին չէր ափսոսում նշ իր հարստու-  
թիւնները, նշ էլ իր փարթամ կեանը։ Բայց  
նրա սիրող ցաւում էր, երբ մտածում էր որդու  
վրայ և տեսնում նուրէզգինի կնոջ անմիսիթար  
կուկիծը։ Վշտից ու արտասուրներից վշացաւ

ծերունու ահոսպաթիւնը և շուտամի նա բռլորովին կուրացաւ:

Բայց, չը նայելով իր կորուստներին ու կուրութեան, Մահմէդ Ալին առաջուայ նման հաւասարամիս օդատակար էր մարդկանց. նա մոռանում էր անձնական լիշտը մերձաւորի դժբախտութիւնը տեսնելիս: Երբ նա զնում էր շուկայով, կորաքամակ ու հին հազուսաներով, իր որդու զեռահասակ կնոջ ուղեկցութեամբ, մարդիկ մինեսյն սւրախտութեամբ դիմաւորում էին նրան և հրաւիրաւմ իրանց մօտ հանդստանուու և կազգուրուերու: Ըստերը հէնց այդտեղ զիմում էին նրան խորհուրդ հարցնելու կամ միխիթարանը լսելու, և նա առաջուայ պէս սրտին շատ մօտ էր ընդունում սւրիշի ցաւը կամ դրժուարին կացութիւնը:

Նա դարձաւ բոլոր ինեզերի բարեկամի, որմնը առաջ նուրէգգինի մօտ էին սրոնում սփոփանը ու օվնութիւն: Սիրում էր նոտ նրանց հետ միասին ժամանակ անցկացնել, գորսվալից լսում էր՝ ինչպէս նրանը արտասուտալի աշքերով լիշտում էին նուրէգգինին և միմեանց ընկհատելով՝ պատմում էին նրա սիրոյ ու դիմութեան մեծ գործերի մասին:

Մահմէդ Արու հաբուստ ու հին ընկերներից սմանը առաջարկում էին նրան ոչ միայն պատրաստի ընակարան, այլ և զրամ՝ առուտուրը

վերսկսելու համար, Բայց Մահմէդ Ալին հանգիստ ու հաստատ հրաժարում էր ամեն բանից, որովհետեւ Աստծու կամքն էր տեսնում իր ճակատագրի մէջ. մարդկանցից ընդունում էր միայն, ինչ որ անհրաժեշտ էր բացցից չը մեռնելու համար: Ամենքն էլ զարմանում էին՝ թէ ինչպէս առոյդ ու համբերատար կերպով տանում էր նա իր ծանր կացութիւնը: Բայց ոչ ոք չէր տեսնում, ինչպէս ծերանին, զիշերները տան կտրի միայն ստած, կտրուից խոր հառաջներ արձակելուի սրտամորմոք հեծեծում էր. «Զաւակներս, զաւակներս...»:

### Վ Հ Ա

Մի մարդ միայն չեց ծերունու այդ սպալի ձայնը: Զափարն էր այդ, որ նորից վիրապարձել էր անապատից: Նա երկար թափուել էր, միշտ որոնելով մեծութեան համեմելու ճանապարհը. բայց վերջիվերջայ նրա մարի ու ասողաւթեան ոյժերը սպառուել էին, և նույն իրան այլ հս անպէտը համարելով որ ի է մի մեծ զարծի՝ զուսահատութեան էր հասել և մոռածում էր վերջ տալ կետնըին:

Նա գէպի Մուսուլ էր ուղղուել վերջին անդամ հօրն ու եղբօրը տեսնելու և նկանց հրաժեշտ տալու համար: Եւ յանկարծ ճանապարհին հարհան զիւղերի ընակիչներից խմացել էր

Մուսուլ բաղարին վիճակուած զժքախտութեան և իր հօր ու եղօր մասին։ Այդ լուրը մի սոսկալի հարուած եղաւ Զաֆարի համար, և նա տանջուում էր այն գիտակցութեամբ, որ նա ինքն էր, փառքի յետից ընկնելու նրա առաջուայ անդուսպ ցանկութիւնն էր զլսաւոր պատճառը՝ իր հօրը հասած թշուառութիւններին։

Մուլծն ընկել էր, երբ մօտեցաւ իր հայրենի բաղարին։ Նրան ծանր էր տեսնել աւերակիներ այն տեղուում, ուր առաջ հայրենական ապարանին էր կանգնած, և նա վհատուած սըրտով սկսեց թափառել ամայի փողոցներուու։ Այդպէս թափառելիս՝ նա տեսաւ մի մեծ տան կտրի վրայ մի ծերունու։ Իր նիհար կնճոռտած ձեռքերով ծնկերը զրկած՝ նստել էր ծերունին, և վշտահար օրորուում էր այս ու այն կողմ։ Նրա սրտաճմլիկ հեծեծանքները հառան մինչ Զաֆարի ականջները։

—Զաւակներս, զաւակներս։

Զաֆարը յուզուած սկսեց նայել այդ ծերացած կոյր գէմքին, որ լուսաւորուած էր լուսնի լոյսով, և լաւ մտիկ տալով՝ ճանաշեց իր հօրը։ Նա ուզում էր ձայն տալ նրան, երբ յանկարծ տեսաւ, որ մի երիտասարդ կին բարձրացաւ կտուրը։ Իր եղօր ամուսինն էր։ Նա ծնկի վրայ եկաւ ծերունու մօտ և զլուխը նրա ուսին կոթնցնելով՝ ծանր հառաշեց։ Ծերունին

ընթըութեամբ սկսեց շոյել նրա զլուխը և ցած ձայնով խօսել հետը։ Զաֆարը լսեց միայն վերջին խօսքերը։

—Ես միշտ յոյս սննեմ, որ իմ որդի Զաֆարը կը վերագանայ մեզ մօտ, և մենք այն ժամանակ այսպէս մենակ չենք լինի։

Բայց Ալֆախման, նուրէդզինի կինը, անյուսալի կիրապով օրօրեց զլուխն ու ասաց։

—Զաֆարը չէ կարող նուրէդզինի տեղը բռնել. Նա ինձ համար օտար է, ևս նրան բոլորովին չեմ ճանաչում։ Եւ նա ընտանեկան ու աշխատաւոր կեանքի համար չէ ստեղծուած։ Նա միայն իրան է սիրում և իր փառքն է որոնում։

—Այդ միշտ է, Ալֆախմա, —ախրութեամբ ասաց ծերունին, —բայց զու չը գիտես՝ թէ նա ենչ աղնիւ սրտի տէր է։ Եթէ նա միայն խմանար մեր դժբախտութեան մասին, անտարակոյս իր ձեռքից եկածը կանէր մեզ օգնելու համար։

Բայց Ալֆախման զաւնութեամբ յարեց։

—Ես երբէք չեմ ներելու Զաֆարին, որ ինքն է մեր թշուառութեան պատճառը։ Եթէ Զաֆարը չը լինէր, նուրէդզինը այժմ զերութեան մէջ չէր մաշուի։

Զաֆարը չը կարողացաւ այլ ևս լոել։ Ամեն մի խօսքը դանակի նման նրա սիրտն էր կտրատում։ Հեկեկանքները ճնշում էին նրա

կուրծքը, և նա՝ զլուխը ձեռքերի մէջ տոտծ՝  
սկսեց փախչել:

Նա կանգնեց այն ժամանակ, երբ քաղաքից դուրս էր եկել, և այնտեղ՝ ծնկերի վրայ ընկներսվ սկսեց գառնապին լաւ, խնդրերսվ Աստծուն ընդունելու իր զղջումը և սավորեցնելու թէ ի՞նչ անէ: Մտածողութեան ու ազօթքի մէջ անցկացրեց ամբողջ գիշերը, և առաւօտեան դէմ արդէն նա զիտէր՝ թէ ի՞նչ է անելու:

Երկրապետով հայրենի քաղաքին՝ Զա-  
ֆարը, առանց ժամանակ կորցնելու, ճանաւրաբն  
ընկաւ զիսպից զիւզ, քաղաքից քաղաք, կերա-  
կըրուերսվ հաւաքած ողորմութեամբ, և իր եղոր  
գերի վերցրած թշնամի ամիրագետի մայրա-  
քաղաքը տանող ճանապարհը սրան նրան հար-  
ցնելով:

### ՎՐԱՅ.

Վերջապէս հասաւ թշնամու զիսպարը քա-  
գաքին: Նա յիշեց՝ թէ ի՞նչպէս մի ժամանակ  
մտել էր այնտեղ իրը յաղթական նուաճող, իսկ  
այժմ նա մտնում էր այնտեղ ուրպէս մուրացկան,  
բուրձ հագած:

Երկրի վեհապետի պալատին հասնելով  
սկսեց խնդրել, որ թոյլ տան նրան ամիրագետին  
տեսնելու և յայտնելու իր աղերսը. բայց պահակ  
զիսուորները վռնդեցին նրան: Սակայն նա չը

հեռացաւ պալատից և սպասում էր՝ թէ երբ կը  
տեսնէ ամիրագետին զրօնանքի զնալիս: Այդպէս  
նա երեք օր մնաց այդտեղ: Արեւ այրում էր նը-  
րան, քամին ամեն կողմից կիզիչ աւազով հարուա-  
ծում. բայց նա պալատից հետանում էր միայն  
հարևան տներից ողորմութիւն խնդրելու համար:  
Նրան խմացնում էին ու սեղանի մնացորդներսվ  
կերակրում:

Վերջապէս շորրորդ օրը նա իմացաւ պա-  
հակներից, որ ամիրագետը պատրաստում է  
այդ օրը բազէի սրսի զնալու: Ահա բացուեցին  
գոները, և գեղեցիկ ձիերի վրայ նստած՝ զուրս  
եկաւ շրախումքը: Ինքը ամիրագետը հեծել էր  
ձինի պէս սպիտակ մի հրաշազեղ ձի և բռնել  
էր ձեռքի վրայ մի բազէ: Երբ նա երևաց պալատի  
դռների առաջ, բռնը այդտեղ կանգնած ու  
մօտով անցնող մարդիկ երեսների վրայ ընկան  
նրա առաջ: Զաֆարն էլ խոնարհուեց մինչև  
գետին, և չպահծ՝ սկսեց արտասուալից խնդրել  
նրան:

— Լսիր ինձ, սպորմած ամիրագետ:

Բայց ամիրագետը մուրացկաններին լսելու  
ժամանակ չուներ: Անցաւ նա մօտով առանց  
կանգ առնելու: Այդ ժամանակ պահակ զինուոր-  
ներից մէկը Զաֆարին առաց.

— Սպասիր, երբ որսից յետ կը դառնայ,  
այն ժամանակ խնդրեիր: Եթէ որսը յաջսող լինի,

ամիրապետն էլ ուսումած կը լինի: Եթէ չէ,  
ոչինչ մի սպասիր:

Եւ Զաֆարը կրկին կանգնած՝ սպասում է:  
Հինց որ հեռուից նկատեց՝ թէ վերադառնում են  
որսից, առաջ անցաւ և սրսից սպասել ամիրա-  
պետի մօտենալուն: Երբ նրա ձին հաւասարուեց  
իրան, Զաֆարը ծունկ չոքից, և նորից բար-  
ձրաձայն սկսեց աղաշել, որ լոէ նրան ամիրա-  
պետը:

Ամիրապետը ձին կանգնեցրեց ու հարցրեց.  
—Ի՞նչ է ուզում այս մուրացկանը:

—Յաղթական մեծ վեհապետ, — սկսեց  
խօսել Զաֆարը, — Աստուած թող զթութեամբ  
լցնէ քո սիրալը: Լսիր նուաստ ստրուկի խրն-  
փիրը, որի կեանքը քո ձեռքին է:

—Ո՞վ ես զու, — հարցրեց ամիրապետը:  
—Ես եկել եմ քո աւելած Մուսուլ քաղա-  
րից: Քեզ մօտ զերութեան մէջ մաշում է իր  
կեանքը նուրէզինը, Մահմէդ Ալու որդին:  
Մտածիր, ամիրապետ, նա քո ինչին է հար-  
կաւոր, այնովէս թոյլ ու խաղաղ մարդը: Գիշա  
նրա խեղճ ու կոյր հօր վրայ, արձակիր նու-  
րէզինին:

—Ի՞նչպէս ես համարձակում անհանգիստ  
անել ինձ արդարիսի դատարկ բաներով, — ընդ-  
հատեց նրան ամիրապետը դժգոհ ձայնով:  
Գերիներին ձրի չեն արձակում: Թող ձերուկը

աւելի իմելօք գեսպան ուղարկէ, հետն էլ հա-  
րուստ փրկանը, այն ժամանակ կը լսեմ նրա  
խնդիրը:

Եւ յօնքերը կիտելով՝ ամիրապետը պա-  
տրաստուեց առաջ անցնելու, բայց այդտեղ  
Զաֆարը գոչեց աւելի կսկծագին.

—Նոիր, ամիրապետ, մինչև վերջը: Ծերունի  
Մահմէդ Ալին բոլորովին տնարանդ է եղած քո  
զինուորների ձեռքավ. Նա ոչինչ չունի տալու  
իր որդու համար: Ես եկել եմ քեզ առաջարկելու  
փրկանը վոխսարէն նրա միւս որդուն, Զա-  
ֆարին:

—Զաֆարին, — բայցականչեց ամիրապետը:  
—Զաֆարին, իմ հօր ամննաշարագոյն թրշ-  
նամուն, որ այնքան վնասներ է պատճառել մեր  
տէրութեան: Օ՛, եթէ նա լինէր իմ ձեռքին,  
ամիրապետի խօսք վկայ, առանց մտածելու ես  
նրան կը վոխսանակէի իմ զերիներից ում հետ  
որ ուզէին:

—Վկայ եմ կանչում Աստծուն, որ Զա-  
ֆարը քո զերին կը լինի այն օրը, երբ նու-  
րէզինը աղատ կարձակուի, — ասաց Զաֆարը:

—Նախ նրան տնիր ինձ, — ասաց ամիրա-  
պետը, — այն ժամանակ կը հաւատամ:

Մի քանի ակնիժարլթ Զաֆարը տատանուեց,  
բայց յետոյ ամբողջ հասակով ուզզուելով և հա-  
մարձակ նայելով ամիրապետի աշքերին՝ հաստատ  
ձայնով ասաց.

— Վեր առ ինձ, Զաֆարը քո առաջն է,  
Չորս կողմը կանգնած ամրութը մի այս  
բաշեց ու Զաֆարից յետ յետ քաշուեց, բար-  
ձրածային իր զարմանքը արտայայտելով:

Ամիրապետը երկար ու սուր հայեացրավ  
նայում էր հալից ընկած մուրացկանին, չափա-  
լով նրանում ճանաչել իր նախկին երեխի հակա-  
ռակորդին:

«Եզրլ՞ս է արգեօր, և ի՞նչպէս իմանալ  
ճշմարտութիւնը.» կարծես մոտածում էր նա և  
աշքերը չէր հեռացնում հերոսից:

— Եթէ այդ այլպէս է, ուրեմն զո՞ւ շտո  
համարձակն ես, — ասաց վերջապէս ամիրապետը:  
— Իսկ ի՞նչ, եթէ ես համայիմ քեզ ցիցը հա-  
նել, և եղրօրդ էլ բաց չը թողնիմ, — ասաց  
ամիրապետը քմծիծալով:

— Ես քո ձեռքին եմ, մեծ վիհապետ — պա-  
տասխանեց հանդիսատ կերպով Զաֆարը, — թէ ի  
ոչ իբրև թշնամի եմ եկել այժմ քո երկիրը,  
այլ իբրև անդին մի պանդուխոտ: Բայց ես ինձ  
տալիս եմ քո ձեռքը, արա ինձ, ինչ ուզում ես,  
միայն բաց թող իմ եղրօրը: Նա անմեղ է, եր-  
բէք ձեռք չէ տուել քո զինուորներից սր և է  
մէկին. լազմա նրան: Օ՛, ամիրապետ, Շատուած  
քեզ չի թողնի նենդութեամբ վալուելու իմ  
ազերսի հետ: Ես ինձ մատնեցի՝ յուսալով քո  
սպորմածութեան ու արդարութեան վրայ դէպի

իս եղբայրը:

Ամիրապետը լսում էր նրան՝ յօհրերը կախ:  
Զաֆարի համարձակութիւնն ու վիհանձնու-  
թիւնը շահթահարել էին նրան: Մի բովէ մոքի  
մէջ ընկաւ, յետոյ վլուխը բարձրացնելով տ-  
սաց.

— Լաւ, վազը կը նայենիք: Իսկ առ այժմ  
վերցնել նրան, — դարձաւ նա ծառաներին, և  
ներս մտաւ պալատի գռներից:

Զաֆարին կապեցին ու ասբան զնպան:

## XXX.

Հետեհալ օրը ամիրապետը ուզեց համո-  
գուել՝ թէ եկուոր մուրացկանը իսկապէս նուրեղ-  
զինի եղբայրն է թէ նշ. Հրամայեց՝ նրանց հա-  
մար անսպասելի կերպով երես առ երես բերել  
նրանց: Միմեանց տեսան թէ չէ, եղբայրները  
հեկեկալով մէկմէկու վզով փաթաթուեցին:

— Զաֆար, Զաֆար, զմւ էլ այսուղ, —  
վշտագին բացականչեց նուրեղզինը:

Զաֆարը սիրտ շարեց եղրօրն ասելու՝ թէ  
ի՞նչը նրան այստեղ է տուածնորդել: Նա միտին  
տսաց.

— Մէր ինզճ հայրը և կինդ քո բուռն  
կարօտն են բաշում, սիրելի եղբայր:

Նոյն օրը ամիրապետը հրամայեց արձակել  
նուրեղզինին, իսկ Զաֆարին պահել տուր  
վատկաներների տակ:

Նուրէդդինը զնդանից դուրս եկաւ, օրհնելով  
երկինքը և չը գիտենալով՝ ինչին վերադրել  
ամիրապետի այդ ողորմածութիւնը, և միայն  
մայրաբազարի փողոցներով անցնելիս՝ ճանա-  
պարհի համար ողորմութիւն հաւաքելով՝ նա  
լսեց իր եղբօր վեհանձն սխրագործութեան  
պատութիւնը, և հասկացաւ՝ թէ ինչ թանկ  
գնով է զնուած իր տպատութիւնը։ Նա դար-  
ձեալ վագեց եկաւ զնդանի գոների մօտ և սկսեց  
սպահապաններին նրաց ու փորձ անել։ Նրանք  
հաստատեցին այն ամենը, ինչ որ լսել էր նա  
քաղաքի բնակիչներից։ Այն ժամանակ ըս-  
կըսեց լաց լինել և յուսահաստարար ձեռքերը  
կոտրատել։ Նա սլացաւ բանտի վերակացուի  
մօտ, աղաչեց նրան իննդրել ամիրապետից վր-  
ճիուլ փոխելու։ Նրան սպատասխանեցին՝ թէ  
ամիրապետը իր հօր տուած խոսառումն է  
կատարում, որը մահուան անկողնում կտակել  
էր իր ժառանգին Զաֆարից վրէժ տանել,  
բայց նա, ողորմած ամիրապետը, յարգելով  
Զաֆարի արիւթիւնն ու մեծանձնութիւնը,  
խոսանում է մահով չը պատժել իր երկրի թշշ-  
նամուն, եթէ նա չը փորձէ զերութիւնից  
փախչել։

Խղճալով Նուրէդդինի անմխիթար վշտին,  
բանտի վերակացուն թոյլատրեց նրան երօրը  
հրաժեշտ տալու։ Այդ վերջին տեսութեան՝ Նու-

րէդդինը դառնապէս լաց էր լինում, բայց Զա-  
ֆարը հանգիստ էր, և ասաց նրան հրաժեշտի  
ժամանակ։

— Քնա՞ խաղաղութեամբ, իմ սիրելի եղբայր։  
Առա մեր հօրը, որ Աստուած ներշնչեց ինձ  
այսպէս վարուելու։ Իմ խիզճն այն ժամանակ  
միայն կը հանգստանայ, երբ դու կը մխիթարես  
մեր հօրը և ընտանիքով քո վերագարձով։ Հա-  
ւատահ, որ ես իմ արածի համար երջանիկ եմ։  
Թող Աստուած օրհնէ քո վերագարձի ճտնա-  
պարհը։

Զերմագին ողջագուրուելով՝ հրաժեշտ տուին  
եղբայրները և բաժանուեցին։

## XX.

Եւ ահա նուրէդդինը կրկին իր հայրենի  
բաղարումն է, ուր նա վերագանալու յաս չու-  
նէր։ Տկար և ուժապառ, հաղիւ կարողացաւ  
հասնել մինչև չուկայի հրապարակը, որտեղ  
թուլացած ընկաւ հաւաքուած ժողովրդի բազ-  
մութեան, մէջ։ Ճուտով ամենին էլ նրան ճանա-  
շեցին։ Յնծութեան աղապակներով զանազան  
կողմեր վագեցին մարդիկ՝ Մահմէդ Ալոն  
գտնելու, որ այդ երջանիկ լուրը յայտնեն նը-  
րան։ Ծերտնին այդ միջոցին ման էր դալիս  
բաղարում ողորմութիւն հաւաքելու՝ Նուրէդ-  
դինի կնոջ ընկերութեամբ։

Որպու ընդառաջելու շտապելով՝ ծերունին  
ոյժ էր տալիս իր թոյլ ու գողգոջուն ոտքերին,  
հազիւ համնելով Ալֆակմային, որ աճապարում  
էր ամուսնուն տեսնելու; Սրտաշարժ ու բեր-  
կըրալից էր նրանց հանդիպումը վերտպարձած  
գերու հետ:

Զափարի արածն իմանալով՝ Մահմեդ  
Ալին աչքերը երկինք բարձրացրեց, չնորհա-  
կալութիւն յալտնեց Աստծոն, և նրա աչքերից  
խանդակաթ արցունքներ հոսեցին:

—Օ՛, որդեակ, իմ Զափարս. ի՞նչպէս  
կուղէի սեզմել քեզ կրծքիս: Այժմ, միայն այժմ  
հասար գու ճշմարիտ մեծութեան ու անմահու-  
թեան. գու այդ ուրիշների համար արեցիր,  
մոռանալով ինքդ քեզ:

Վերապարձաւ արդեօր Զափարը դերու-  
թիւնից, թէ այնտեղ գնդանումն էլ մեռաւ,  
այդ մասին ժողովրդական տւանդութիւնը տար-  
քեր է խօսում: Բայց նրա սխրագործութեան  
պատմութիւնը մինչև այսօր էլ զեռ կենդանի է  
ժողովրդի յիշողութեան մէջ, և յաւիտեան  
կը մնայ իրեկ պայծառ օրինակ սիրոյ և  
անձնուիրութեան:



13.522